ԿԱՊԻՏԱԼ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 07

ք.Եղեգնաձոր **12.12.2019թ.**

ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանը, ի դեմս գլխավոր քարտուղար Կ.Սահակյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա մի կողմից, և Ջերմուկ համայնքի համայնքապետը, ի դեմս Վ.Հովհաննիսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ կառավարության 16.11.2006թ թիվ 1708-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 05.12.2019թ. թիվ 1758-Ն որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Նվիրատուն Նվիրառուին հատկացնում է 46591.0 հազ.դրամ /Քառասունվեց միլիոն հինգ հարյուր իննսունմեկ հազար ՀՀ դրամ/, որից 14612.0 /Տասնչորս միլիոն վեց հարյուր տասներկու հազար/ ՀՀ դրամ Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի թիվ 16շ. մարզադպրոցի մասնաշենքի հիմնանորոգման և արդիականացման նպատակով, 31979.0 /Երեսունմեկ միլիոն ինի հարյուր յոթանասունինը հազար'' ՀՀ դրամ Ջերմուկ համայնքի ''Ջատիկ'' ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի Ձախափնյակ թաղամասի մասնաշենքի ձմեռային այգու, Կեչուտ գյուղի մասնաշենքի 2 հարկերի, տանիքի և ''Գնդեվազ համայնքի մանկապարտեզ'' ՀՈԱԿ-ի մասնաշենքի տանիքի հիմնանորոգման նպատակով:

2.Գումարը տրամադրելու և ծախսելու կարգը

2.1. Ֆինանսական միջոցները համայնքին տրամադրվում է սույն պայամագրի հիման վրա՝ հիմք ընդունելով տվյալ ապրարնքների, աշխատանքների և ծառայությունների ձեռք բերման նպատակով համայնքի և ընտրված մասնակցի հետ կնքված գնման պայմանագրի շրջանակում մարզպետարան ներկայացված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ծախսը հիմնավորող փաստաթղթերը:

2.2 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան :

2.3.Նվիրառուն պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան և ապահովի սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված նպատակների իրականացման հետ կապված փաստաթղթերին ծանոթանալու՝ Նվիրատուի ներկայացուցչի հնարավորությունը:

2.4. Սույն պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո Նվիրառուի կողմից սույն պայմանագրի 2.1. կետում նշված փաստաթղթերը Նվիրատուին ներկայացնելուց հետո Նվիրատուն գումարը փոխանցում է Նվիրառուի գանձապետական հաշվին, իսկ Նվիրառուն գումարներն օգտագործում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.5. Նվիրառուն պարտավոր է ստացված սուբվենցիայի հաշվին ֆինանսավորվող նպատակային ծախսատեսակի կատարումից /ծրագրի ավարտից/ հետո եռօրյա ժամկետում սուբվենցիայի չօգտագործված գումարը վերադարձնել ՀՀ պետական բյուջե:

2.6. Նվիրառուի կողմից հատկացված սուբվենցիայի կամ դրա մի մասի ոչ նպատակային օգտագործման դեպքում պետության կողմից կկիրառվի պատժամիջոց, այն է ոչ նպատակային օգտագործված գումարի հետգանձում համայնքի միջոցներից և սուբվենցիայի միջոցների հետագա հատկացման հնարավոր դադարեցում:

3.Հաշվետվությունը

3.1. Սույն պայմանագրի 1.1. կետում նշված նպատակների իրականացումից հետո Նվիրառուն գրավոր Նվիրատուին է ներկայացնում սուբվենցիայի օգտագործման մասին վերջնական հաշվետվություն:

4. Այլ դրույթներ

4.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 20.12.2019թ.:

4.2.Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ , որը կնքվում է գրավոր:

4.3. Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5.Կողմերի իրավաբանական հասցեները

Նվիրատու	*Նվիրառու*
ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան	*Ջերմուկի համայնքապետարան*
ք.Եղեգնաձոր, Շահումյան 5	*հասցե՝ ք.Ջերմուկ*
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	*ՀՀ ՖՆ գործառնական վարչություն*
Հ/Հ 900351000865	*Հ/Հ 08913735*
ՀՎՀՀ 08907717	*ՀՎՀՀ 900365000281*
Գլխավոր քարտուղար՝ Կ.Սահակյան	*Համայնքապետ ՝ Վ.Հովհաննիսյան*
/Ստորագրություն/	*/Ստորագրություն/*